




ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՏԻՊԱՐ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

1986 թվականին Բեյրութում (Տպարան Կ. Տոնիկյան և Որդիք) լույս տեսավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատան վարիչ Նուբար Տեր-Միքայելյանի «Սիոն արքեպիսկոպոս Մանուկեան. կեանքը և գործը» ծավալուն աշխատությունը, որը հրատարակվել է սրբազան հոր ծննդյան 80-և հոգևոր ծառայության 80-ամյակի առթիվ:

Աշխատությունը բաղկացած է հետևյալ մասերից. «Յառաջաբան», «Միջավայրն ու ժամանակաշրջանը», «Երուսաղեմ», «Հոգևոր և վարչական պաշտոններ», «Եպիսկոպոս օծման 30 և ծննդեան 70-ամեակի հանդիսատի մշտն», «Ատենապետ Գերագույն Հոգևոր Խորհրդի», «Բնութագիրը», «Կոնդակներ և պաշտոնական գրություններ», «Մի քանի քանախօսություններ և անտիպ յօդուածներ», «Գրական վաստակը (16 գրքերն ու գրքոյկները)», «Կեանքի տարեգրությունը» և «Նկարներու ցանկ»:

«Յառաջաբան»-ում հեղինակը համառոտակի բնութագրում է գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկեանին՝ որպես առաքինի մարդ և տիպար հայ հոգևորական, որն «իր օրինակելի վարք ու բարքով, իր երկարատև անքափի ծառայությամբ ու նուիրումով, կենդանի գեղեցիկ օրինակ է հանդիսանում մեր նոր սերունդին, յատկապես մեր Եկեղեցու աշխատասարդ հոգեւորականության համար, որ այժմ գալիս է փոխարինելու նախորդին» (էջ 6):

«Միջավայրն ու ժամանակաշրջանը» գլխում ընդհանուր գծերի մեջ հեղինակը պատմական տեղեկություններ է տալիս Ուրարտական թագավորության մայրաքաղաք Տուշպայի (Վան) և նրա բնակիչների, ինչպես նաև Վասպուրական աշխարհի թիմար գավառի Կիրաշեն գյուղի մասին, որտեղ և 1906 թվականին ծնվել է գերաշնորհ Ս. Սիոն արքեպս. Մանուկյանը:

Այնուհետև հեղինակը համառոտակի տեղեկություններ է տալիս 1915 թվականին թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված հայկական ցեղասպանության մասին. այդ դժնդակ օրերին շատ ու շատ հայ երեխաներ որբացան և հանձնվեցին ճակատագրի քմահաճության: Այդպիսիների թվում էր նաև Սարգիս Մանուկյանը (այսպես՝ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան):

Հայ ժողովրդի դառը ճակատագրի այդ փոթորկահույզ ալիքները 1921 թվականին պատանի Սարգսին, 850 հայ որբերի հետ, նետեցին Երուսաղեմի հայոց վանք:

«Երուսաղեմ» գլխում հեղինակը տեղեկություններ է տալիս որբացած պատանի Սարգսի՝ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում հոգևոր կրթություն ստանալու մասին, որտեղ, ի թիվս այլ ուսուցիչների, դասավանդում էին Հայ Եկեղեցու ականավոր դեմքերից Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը (հետագայում՝ Պատրիարք Երու-

սաղեմի) և Բաբգեն եպիսկոպոս Կյուլեներյանը (հետագայում կաթողիկոս):

1926 թվականից սկսվում է Սիոն արքեպիսկոպոսի հոգևոր ծառայությունը՝ ըսկըգրում որպես սարկավագ, ապա արեղա (1930 թ.), վարդապետ (1930 թ.), եպիսկոպոս (1945 թ.):

Ընթերցողը երբ ծանոթանում է Սիոն արքագանի կենսագրությանը, նրա առջև հառնում է առաքինի, միիրյալ հայ հոգեվորականը: Սրբազան հայրը վարել է վանական պաշտոններ, եղել է ուսուցիչ, հոգևոր հովիվ Փրավիդենսի (1938—1946 թթ.), առաջնորդական փոխանորդ ԱՄՆ-ի միջին արևմտյան շրջանի (1946—1952 թթ.), հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի (1952—1959 թթ.), առաջնորդ հայոց Ամերիկայի (1959—1966 թթ.), քարոզիչ Դետրոյտի (1966—1968 թթ.), հայրապետական պատվիրակ Եգիպտոսի, Սուդանի և Եթովպիայի (1969 թ.), ատենապետ Գերագույն Հոգևոր Խորհրդի (1978-ից մինչև օրս) և այլն:

ԱՄՆ-ում պաշտոնավարելիս Սիոն արքագանը աչքի է ընկել նաև իր շինարարական գործունեությամբ. նրա անմիջական նախաձեռնությամբ կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ, առաջնորդարաններ, դպրոցներ, վարժարաններ, մշակութային կենտրոններ, հանդիսասրահներ և այլ շինություններ: Իր հոգևոր և շինարարական գործունեության համար Սիոն արքեպիսկոպոսը բազմիցս արժանացել է Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի անձնական և պաշտոնական գնահատանքին: Ահա թե ինչ է գրում Հայոց Հայրապետը իր 21 դեկտեմբեր 1960 թվակիր կոնդակում.

«Ամեն տեղ խորապես մխիթարունակա-

և հրճունեցանք, տեսնելով Ձեր թեմի եկեղեցիներում շեն ու բարեկարգ վիճակը և Ձեր առաջնորդութեան ներքև գործող զինուորեալ հոգևորականութեան բարի եռանդն ու անձնդիր աշխատանքը: Մխիթարունեցանք և հրճունեցանք մանաւանդ տեսնելով Մեր սիրեցեալ ժողովուրդին քրիստոնէական հաւատքի ջերմութիւնը և հայկական հոգիի պայծառութիւնը ինչպէս և անարատ սերն ու հաւատարմութիւնը դէպի Հայաստանեայց Եկեղեցին և դէպի Մեր ամենուն պաշտելի Սուրբ Էջմիածինը և յաւերժական և վերածնած երկիրը մեր հայրենական» (էջ 109—110):

Սիոն արքագանը ունի նաև լուրջ գրական վաստակ: Նա շուրջ երկու տասնյակի հասնող գրքերի և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Նա աչքի է ընկնում նաև իր թարգմանական գործերով:

Սույն գրքի հեղինակը 7-րդ գլխում գետնել է պաշտոնական գրություններ, նամակներ և կոնդակներ Թորգոմ արքեպս. Գուշակյանի, Գևորգ Զ և Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսների, որոնցում ըստ արժանվույն գնահատանքի խոսքեր են ուղղված Սիոն արքագանի հասցեին:

Գրքի 9-րդ գլխում Նուբար Տեր-Միքայելյանը մեկ առ մեկ ներկայացնում է Սիոն արքագանի հրատարակած գրքերը և տալիս համառոտ նկարագրություն դրանց մասին:

Գրքում գետնելված են նաև Սիոն արքագանի տարիքային տարբեր շրջանների լուսանկարներ:

Սույն աշխատությունը Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի բազմամյա հոգևոր-եկեղեցական գործունեության արժանի գնահատական է:

ՎՈԼՈՂՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

